

ՆԱԴՂԱՏՈՒՄ ԱՎԱՐՏՎԵՅ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՂԱԾ «Ս. ՆՈՎՆԱՆ ՕԶՆԵՅԻ ՆԱՅՐԱՊԵՏՈՒ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և Գուգարաց թեմի առաջնորդ Ս. Մեպուհ եպս. Չուլջանի նախաձեռնությամբ հունիսի 3-5-ը հաղպատում Կրեմլի ունեցավ «Ս. Նովհան Օձնեցի հայրապետը և իր ժամանակը» խորագրով գիտաժողովը:

«Մեր նպատակն է նախ պանծացնել Սուրբ հայրապետի հիշատակը, կարևորել նրա հիմնարար դերը հայ Եկեղեցու ազգայնացման գործում և ապա վերաբժեկողել նրա իմաստուն կեցվածքը մեր ժողովրդի պարմության ճակարագրական հարվածում», - բացելով գիտաժողովն ասաց Սեպուհ Սրբազանը:

Հանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց հայրապետի գիտաժողովի մասնակիցներին ողջույնի և օրհնության խոսք ասաց Ս. Եզնիկ եպս. Պետրոսյանը:

Ս. Նովհան Օձնեցին, որ իրավամբ կրում է Իմաստասեր անունը, 8-րդ դարի հայոց մեծագույն հայրապետներից է: Գահակալության 11 տարիների ընթացքում Ս. հայրապետը կարողացել է դիմակայել բյուզանդական ու արաբական ճնշումներին և պայքար մղել աղանդավորության փարատեսակ արքայապետությունների դեմ: Օձնեցին թողել է նաև հարուստ ու արժեքավոր մատենագրական ժառանգություն: Նրա «Կանոնագիրը հայոց»-ը հայ իրականության մեջ իրավաբանական առաջին մեծ ժողովածուն է, իսկ «Գիրք թղթոց»-ը ամփոփում է հայ և Ընդհանրական Եկեղեցու հայրերի թղթակցություններն ու նամակները: Ս. Նովհան Օձնեցուց մեզ են հասել նաև բազմաթիվ ճառեր, շարականներ: Նա հայրենի է նաև իր հրաշագործություններով:

Գիտաժողովի մասնակիցները՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պարասխանատու Ս. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Անդրկովկասում Վարդիկյանի դեսպան և պապական նվիրակ Կառույիտ արքեպս. Գուջջերոսին, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի, Մաշտոցի անվան Մատենադարանի և Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի գիտնականներն իրենց զեկուցումներով բազմակողմանիորեն ներկայացրեցին Օձնեցի հայրապետին՝ իբրև աստվածաբան, իմաստուն քաղաքական և մշակութային գործիչ, կանոնագետ, պարկերաբան, ուղղափառության ջարագով, շինարար, շարականագիր և խաչքարային մշակույթի ձևավորման գործում մեծ ներդրում ունեցող: Բոլոր այս զեկուցումները հեղափոխում կրպագովեն:

Ս. Նովհան Օձնեցու շարականների կարարմամբ հանդես եկավ Անահիտ Պապայանը:

Գիտաժողովի օրերին մասնակիցները Սեպուհ Սրբազանի առաջնորդությամբ այցելեցին Ալավերդու Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցի, եղան Սանահինի վանքում և Օձունի տաճարում: Մասնակիցներն ուխտագնացություն կատարեցին նաև Արդվիի Ս. Նովհաննես (Սրբանես) եկեղեցի, ուր գտնվում է հայոց Իմաստասեր Կաթողիկոսի շիրիմը: Նրանք աղոթք բարձրացրեցին առ Աստված՝ իրենց խոնարհումը բերելով Սուրբ հայրապետի լույս նշխարներին:

Անխտիելով գիտաժողովի արդյունքներն ու նպատակները՝ գիտաժողովի մասնակիցները հանդես եկան կոչով՝ մատնանշելով հայ ազգային-եկեղեցական կյանքի ներկայիս մարտահրավերները, հորդորելով առավել ուշադրություն ու նախանձախնդրություն ցուցաբերել հոգևոր և ազգային արժեքներին, մերժել ազգային նկարագրին անհարիր օտարամուր երևույթները՝ որպես օրինակ ունենալով 8-րդ դարի Իմաստասեր Հայրապետին: Այս առիթով կոչ է արվում նաև՝ հանրությանը մատչելի դարձնել Եկեղեցու և ազգի պատմության ավանդույթներն ու բազմահարուստ փորձը, քաջալերել նման գիտաժողովների կազմակերպումը և հատկապես ուսանողության մասնակցությունը դրանց՝ գիտակից ու ազգային նկարագրով սերունդ դաստիարակելու նպատակով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏՆՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ